

Հ Ր Ա Մ Ա Ն N 356-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«18» ՀՈՒԼԻՍԻ 2018 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

**«ԵՐԵՎԱՆ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՏԱՐ ԱՆԱՀԻՏ ՄԻՆԱՍՅԱՆԻ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԵՐԵՎԱՆ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ
ՆՈՏԱՐ ԱԻԴԱ ԱՔՐԱՀԱՄՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով և 22-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության նոտարական պալատի նախագահ Վ. Հովսեփյանի 2018 թվականի հուլիսի 12-ի N ԵՆՊ-434/18 գրությունը և «Երևան» նոտարական տարածքի նոտար Ա. Մինասյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. 2018 թվականի հուլիսի 23-ից մինչև օգոստոսի 3-ը ներառյալ «Երևան» նոտարական տարածքի, նստավայր՝ «Շենգավիթ 3» նոտար Անահիտ Մինասյանի ժամանակավոր բացակայության ընթացքում նրա կողմից «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-63-րդ հոդվածներով նախատեսված նոտարական գործողություններ կատարելու, ինչպես նաև վավերացված գործարքներում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու կամ դրանք վաղակետ լուծելու լիազորությունները վերապահել «Երևան» նոտարական տարածքի, նստավայր՝ «Կենտրոն 4» նոտար Աիդա Աբրահամյանին:

Ժամանակավոր պաշտոնակատար՝

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ